 իսկ . այլ՝ հազիւ պատահի այսպի-
 սելոց իմն գործառնուէ՝ մնալ առանց
 օգտի վասն միոյն , և առանց վտան-
 գի վն միւսոյն :

Վաճառականքն աւելի ապահով
 են անդ՝ առ ՚ի գտանել զընդունելուի
 և զպաշտպանուի . ՚ի մէջ երկար , և
 արիւնահեղ խռովուեցն՝ որք վեր
 ՚ի վայր տապալեցին զբոլոր Պարս-
 կաստան յիբր ընթացս միոյ դարու ,
 խուսէ այսոցիկ արանց՝ պաշտպանեալ
 լինէր միշտ ՚ի կառավարուեցն՝ որք
 յաջորդէին միմեանց ապշեցուցիչ
 իմն արագուէ , և մանաւանդ ՚ի
 կառավարութենէն բարեբարոյ առն

Քէրիմ խանին, որոյ յիշատակն է, և
 լինելոց է, ևս յըտերկար՝ յարգելի
 առ Պարսիկս, որպիսի է, և արդ-
 յիշատակ Հէնրիկոսի չորրորդի՝ առ-
 մեզ, և առ Թոռուսս մեր (*):

Ամենայն վաճառականք՝ Թէ
 Պարսիկք, Թէ օտարազնեայք, զն-
 որսինակ Հայք, Յոյսք և Օսման-
 եանք՝ անցանելով ը նահանգս
 իւրաքանչիւր կառավարչաց Ծին՝
 զերծ են ՚ի մասնաւոր հարկահա-

(*) Քէրիմ խանն յընթացս տասն
 և ինն ամաց՝ երջանկացոյց զՊարս-
 կաստան. ո՛չ երբէք կամեցաւ տանել
 զձայրագոյն սլառու՛ւնուն Հահի՝
 𐎧𐎡𐎴, այլ՝ բաւական համարեաց ին-
 քեան՝ կոչիլ վէքիլ, وکیل կի՛ կա-
 ռավարիչ և մեռաւ յամի օն 1779:

Կուռնաց ՚ի կողմանէ՛, նոցա. լուրք վնա-
 սուռ միոյ և եթ վաճառականի՛ն՝ տա-
 րածի յայնժամ ըստ մահ տեղիս,
 և խոռովեցուցանէ՛, ղհամայն վա-
 ճառականս երկրին, և օտար ճաց
 և ևս. ղի ունին նորա ղթղթակ-
 ցուի՛ն անընդհատ շարունակուի՛ն Է
 ղանաղան գաւառս Ասիոյ. և ՚ի
 պատահիչն նոցա՛ն այնպիսի հարկա-
 հանուռնաց ինչ, և նեղուռնաց՝ ամենայն
 գործառուաւիք նոցին իսկ և իսկ
 դարարին, և ձայն աղաղակի նոցուն
 հնչեալ լինի մինչ ՚ի ծագ ճաց
 Հնդկաց, և գլխաւոր վաճառանիստ
 տեղեաց Եւրոպիոյ. և այսպիսի դի-
 պոնւած՝ ղմեծ վտանգ բերէ պատուոյ
 անուան Թագաւորին՝ :

Թէպէտև իշխանուի՛ն՝ ղոր ունի

Ֆէթալի Հահ՝ իցէ բացարձակ և
 անկոպար, այլ՝ բարեմտուէի նորա
 ծանասէ, և զայլ երկու պետուէս՝
 որ են աւելի վեհագոյնք քան զիւ-
 րայինն, և նոյնգուճակ աւելի պատ-
 կառելիք, և ահարկուք ՚ի Սսիա՝
 ունի և յԵւրոպիա, որպիսի են հեղի-
 նակուէիքն արդարուէ, և դատման
 հասարակաց: Ախորժեղի իմն է ար-
 դարև վկայել զԹագաւորաց զայն՝ ո-
 բում արժանաւորին. նա զի՝ այսպիսի
 տեսուէի աւելապէս պատուէ, զարքայ
 ոք արևելեայ: Յաւելցուք ասել Թէ
 ո՛չ զօրեմք ըստ բաւականին գուլել
 զմարդատիրական, և զբարեգութ
 վարս սորա՝ դէպ առ արու զաւակս
 տան իւրոյ. զի կարէր ըստ սովո-
 բուէ իմիք՝ զգուշաբար պահպանելոյ

'ի ցեղապետութեան: Սօֆեանց՝ զրկել
 զնոսա 'ի կենաց, և կմ 'ի տեսու-
 րեան: աչաց: Նոյնօրինակ գոգցնս
 գթածասիրտ հանդիսանայ նաև դէպ
 առ գործակալս Թագաւորուէ իւրոյ,
 զի ամենայն անհատք՝ անմիջական
 երաշխաւորուի անձին իւրեանց դէպ
 առ Թագաւորն՝ զետեղեալ գտանին
 'ի ներքոյ սայրի ահեղատեսիլ սրոյ
 նորին, որ և զրկէ զնոսա 'ի յօգ-
 նութեան: օրինաց, և դատաստանաց.
 Իսկ այլ հպատակք՝ կարեն բողոքել
 զայնս 'ի պաշտպանութի իւրեանց:

Վերջապէս՝ վայելուչ վարկունձն՝
 զոր գրաւեալ ունիմք 'ի միտս
 զՔեթաւի Հահէն, զոր և կամիմք
 հաղորդել ընթերցասիրաց մերոց՝
 երևի թէ ըստ բաւականին ճշգրտեալ

եղև խոհական կիրառուէք նր ժա-
մանակաց իւրոց, և անկ է գծագրել
աստ համառօտիւ՝ և ամ հարա-
զատուէք՝ նաև զինչ ինչ 'ի վր
տարազու կերոյ նորա, 'ի վր զբաղ-
մանոց իւրոց իւրաքանչիւր աւուր,
և 'ի վր կերսլի անդորրացուցանե-
լոյ զանձն իւր:

Թէ և անտահման բարձրութե-
ամբն աստիճանի իւրոյ յորում գտանի՝
ոչ ունիցի արքայն Պարսից գոգցն
զիր մի հաւասար այլոց մահկան-
ացո՛ւաց, և մանաւանդ՝ հոգատա-
կացն իւրոյ տէրուէ. այլ այսու իսկ
ևս՝ երևի նա լինել աւելի գերի
քան զնոսա. կմ վիճակ իւր գնակ՝
հրամայէ ինքեան զոմանս խտրոցս՝
զոր այլք ոչ ունին. ահա՛ արք

արդարացուցանի ազդողական վճիռն
այն՝ պերճարան հեղինակի մատենին
անսլանսերոյ՝ Հրահանգ բուռէ, յա-
սեղն (հօր մ. եր. 456. տպ. 1784) :

Մինչ իրաւունք մարդկային,
Դնեն զկապանս յոտ ծառային,
Արդարուին Աստուածային,
Բառնայ ըզմիւս ծայր շխթային,
Յանկուցանէ ըստ օրինին,
'ի պարանոց բռնակալին :

Արդարեւ անհամար պարաւան-
դուիք, ռուբրոյթք և արարողուիք
պաշատականք՝ որոց ենթարկեալ
տեսանի Թագաւորն Պարսից՝ ան-
հարթչի կարեորուիք գոյանան
նմա՝ պատճառաւ մտալոյ նոցա 'ի

վաղնջական դարուց անտի. այլ՝ գի-
 տելի է, թէ քանի՛ դժուարին է, և
 բռնակալ իշխեցողութիւնս՝ այնօրինակ
 կրթականութե՝ որ տեւէ տակաւին
 յայնուսիկ Ծս և Լս՝ որք կամինս
 Թօթափիլ ՚ի նմանէ : Յաւելցուք
 ասել նաև՝ թէ՛ այնպիսի սովորոյթք
 և արարողութիք կաշտուս (անկա-
 տարելութիմս արդարև) զտեղի
 ինչ հիմնական օրինաց, և սահմա-
 նադրութեց ՚ի մէջ ամ ազգաց՝ հպա-
 տակելոց ինքնական պետութե :

Այլթար և մանրամասն պահ-
 պանութի կրօնական պարաւանդու-
 եց, յորմէ՝ Թագաւոր ոք Պարսից
 (կարծեցեալ արդէն ՚ի ՍիւնսիԹ
 Օսմանեանց՝ իբր հերձիկ, և Նը-
 վակուււ) ո՛չ կարէ պատճառանօք

իւիք՝ հրաժեշտ առնուլ. ապա պահանջէ՛ ՚ի նմանէ՛, նոյն իսկ օրինակ պահուին՝ լինել կանխայարոյց յոյժ ընդ առաւօտն : Եւ որովհետեւ ննջէ արքայն Պարսից ՚ի ներքս պալատին՝ ՚ի յարկ կանանուոյ (*), և որոյ մուտն արգելեալ է բոլորովին առ մամ մարդ. կանայք և ներքինիք ապարանին՝ պատրաստեն զհանդերձս և զվառ իւր. յետ զգեստաւորելոյն՝ յարդարէ անդ Թագաւորն իբր զա-

(*) Յարկ կանանց՝ որ և կոչի Հարկ մ բո, է տեղ ի անմատչելի յարանց. ոմանք յԵւրոպացւոց՝ շին Թէն զայս բառ՝ ընդ Սերայ سرا, բառին Պարսից՝ որ նշանակէ պալատ, կամ ապարան :

տեսնու ինչ՝ որ տեւէ մինչ ՚ի մի, կամ
յերկու ժամն. կանայք յարկին ու-
նելով զզանազան տեսակս պաշտո-
նից, և պատճնոց, ըստ մասի հա-
մանաման արտաքին գործակալացն
Թագաւորուէ, ունին և զիշխա-
նուէ ՚ի հրամայել անդ զհաւաքումն
հանդիսին, պահել զկարգ ՚ի մեջ
եկեղոցն, ցուցանել իւրաքանչիւր
կստջ՝ զյատուկ յատուկ տեղի ըստ
արժանաւորուէ, և ըստ առաջնուէ
աստիճանաց նոցա, և վերջապէս
տնօրինել զամեն ըստ ճիշդ սովորու-
նոց, և կարգաց պահելոց ՚ի մեջ
զիւանի, և կմ խորհրդարանի տե-
րուէ : Յայնժամ օրինաւոր կանա-
նին, հարձք և նստիշտք միանգա-
մայն՝ ներկայանան յայն ներքին

խորհրդարան, և տան Թագաւորին
 զճանօթուէն ՚ի վր իւրաքանչիւր
 իրաց կառավարուէն կանանաքնակ
 յարկի իւրոյ. յետ որոյ՝ դատէ ար-
 քայն զիրոն՝ ըստ ազդարարուէ իւ-
 րոց օրինաւոր կանանց միայն, որք
 ունին հասարակօրէն զարտօնուէ
 բազմելոյ ՚ի ներկայուէ իւրում :

Ըստ եղանակն Թագաւորին ՚ի կա-
 նանետղ ապարանէն՝ պաշտօնեայք
 պաշատին՝ որ սպասէին նմա ՚ի դռնն
 ընկերան նմա մինչ ՚ի յարտաքին պա-
 շատն. ապա մտաննն անդ զխաւոր
 մտերիմք իւր, և յարգաւորեն զնա.
 զկնի որոյ՝ յանձն առնու արքայն
 զընտանեկան խօսակցութիւնն ինչ ընդ
 նն. դեռահաս իշխանապետք Թա-
 գաւորական տան՝ ներկայանան նաև

'ի անին ժամն առ 'ի մատուցանել
 նմա զխոնարհութի. հուսկ յետոյ՝
 հրամայէ Թագաւորն բերել ինքեան
 զնախածաշիկ : Սեղանապետ ար-
 քային՝ որ հոգայ զհանդերձանս մտ
 խորտկաց հրամայելոց 'ի կեր Թա-
 գաւորին՝ տայ յայնժամ զպատուէր
 'ի կատարումն իրին. ամեայն մտե-
 ղէն կերակուրք՝ պատրաստեալ տե-
 սանին յայնժամ 'ի մեջ յախճապակի
 սկտեղաց, ունելով 'ի վերոյ և
 զխուփս արծաթեայն. այտքիկ ափ-
 սէք տեղաւորեալ շինին 'ի մեջ սա-
 պատի միոյ, որ փակեալ, և կնքեալ
 մատանեալ սեղանապետին, և ծած-
 կեալ միով ճեճագին ցփսեալ՝ բերի
 առաջ ի Թագաւորին. անդ 'ի ներ-
 կայուէ նորա՝ բեկանեն զկնքն, և

շարենս զսկտեղսն առաջի նր : Ուսանք
 յիշխանազունս զաւակաց իւրոց՝
 նստինս յայնժամ քնամա ի ծաշ : գլխա-
 ւոր բժիշկ Թագաւորին՝ հարկաւ-
 սրապէս պարտի շինել անդ, և ծա-
 շակել նախ ինքն՝ զիւրաքանչիւր
 խորտիկ : Կարծենս աստ պաշտոա-
 կանքն՝ Թէ ներկայուի բժշկին վս-
 այն իցէ հարկաւոր, զի եթէ պաստա-
 հիցի արքային՝ յուտեստ իւր դոյզն
 ինչ խօթուի յանկարծուստ՝ բժիշկն
 այն կարէ նոյնհետայն պայմանել
 զդարման ինչ պատշաճաւոր : Այլ մեք
 վարկանեմք ընդ խոհական ասպե-
 տինս Մալգոլմայ Թէ՛ սնակ իցէ վե-
 րաբերել զպարաւանդեալ ներկայուի
 բժշկին՝ առ այստսիկ Թեթեւագոյն
 անձկուիս սրտի՝ որք մեղմենս փոքր

ինչ զհաճոյականս վայելչութիս ինք-
նական իշխանութի :

Չկսի առնելոյ Թագաւորին զսա-
խաճաշիկ իւր՝ նախարարք և ղիւ-
անատպօիքք տէրութե մտանենս անմի-
ջապէս յառանձինս ատեան իւր, և
տան նսնա զճանօթութիս ՚ի վր զա-
նաղան իրաց Թագաւորութե, և ըն-
կախունս ապա զսրատոճէքս ՚ի նսնանէ :
Յետ այսր առանձինս ատենի՝ սկսա-
նի Թագաւորն կարգել և զհրատա-
րակ ատեան կամ ղիւանս, որ տեէ
մինչև ՚ի մի ժամ և կէս . յորում
ներկայանան իշխանք, նաև նա-
խարարք, և մեծամեծ գործակալք
տէրութե . անդ շինի դատաստան հա-
սարակօրէն ՚ի վերայ մտ իրաց՝ որք
կարեն ՚ի յայտ դալ առաջի ժողով-

ըրդեան • անդ շինին ՚սաև օրինա-
 դրական առաջարկութիք առ ՚ի սահ-
 մանել զտրիտուր վարձ , կմ զպատիժ
 վն ումեք • բայց՝ Թագաւորն ար-
 տայայտէ , անդ զկարծիս մտաց իւրոց
 բացորոշ բանիւք , և պատուիրէ ա-
 մեանցուն գիտել զայն :

Յաւարտելն զայս ատեան՝ մտանէ
 ապա արքայն ՚ի սենեակ խորհրդարա-
 նին , ուր մնայ մինչ ՚ի մի , կմ յերկու
 ժամն՝ ընդ մտերիմն , և ը ՚սախա-
 րարս իւր : Յետ անցուցանելոյ այս-
 պէս զժամանակ իւր մինչ ՚ի հասա-
 րակօրեայ ժամն՝ մեկնի անտի , և
 մտանէ ՚ի յարկ կանանց • բայց՝ ՚ի սոյն
 կայարան զն՛ւարձուէ վն իւր՝ ո՛չ
 մոռանայ զպարաւանդութն վերա-
 դառնալոյ անդ յամենայնում աւուր

յառաջ քան զմուտ արեգական, առ-
 ՚ի բաղմիլ յայլ իմն հրատարակ ա-
 տեան, և առնել ապա զձիարչաւ ինչ,
 և մտանել յետոյ ՚ի յընթրիս՝ զոր
 սպասաւորեն նմա ՚ի միջոցի ուծն,
 և ինն ժամուց երեկոյի, նոյն
 գունակ արարողութիւնք, և մեծամեծ
 զգուշութիւնք՝ զոր ծանուցաք ՚ի վե-
 րոյ : Առնէ թագաւորն զընթրիս
 իւր՝ բաղմելով ՚ի վր ստորակալառ-ի
 միոյ ըստ սովորուէ աղգին. սկտեղքն
 եղեալ կան յայնժամ ՚ի վր այլ իմն
 ասղանագործ և մեծագին ստորակա-
 վառի : Բաղում թագաւորք Պար-
 սից ՚ի ցեղէ Սօֆեանց, զորօրինակ
 Հահաբաս երկրորդ, և Հահսէֆի
 երրորդ՝ ըմպէին զգինսի անխղճաբար
 և հրատարակօրէն, և արբենային

և և Թ. Բայց՝ ոչ ոք ՚ի Կաճարեանս
ցեղէ՛ն՝ որ Թագաւորէ՛, առ այժմս՝
յանձն է՛, առ զԴժբողութիւնս այսր օրի-
նի՛ն՝ որ է մին ՚ի գլխաւորացն մահ-
մետաղենս կրօնի՛. այլ՝ բաւականաման
սոքա գոնէ՛, առ երևոյԹս՝ ոմամք
օշարակօք պատրաստելովք յազնիւ
մրգեղ ինաց :

Յետ կատարելոյ զընթրիս իւր՝
դառնայ Թագաւորն վերստին ՚ի
յարկ իւր կանանւոյ. և յայժամ
չքնաղուհի բնակիչք տեղւոյն՝ գուն
գործեն առ ՚ի բերկրեցուցանել
զնա երգօք, և պարուք իւրեանց :

Ամենայն ինչ զոր տեսանէ, և զոր
լսէ՛ նկունս առնեն հարկաւորապէս
յաչս իւր յոյժ յոյժ զազնուլնութի մարդ-
կայիսս Թեուէ՛, նա զի՛ պահա-

սլանք՝ որք ո՛չ անկաւորին առ մին
 կմ առ միւս յերկատեալ սեռ-ից՝ չար-
 չարեն, և Թշնամանեն և ևն՝ զանազ
 և զբարեշտրհ պատանուհիս. իսկ
 սոքին փակեալք ամբուլք՝ ՚ի ման-
 կական հասակէ անտի, և զրկեալք
 յուսմանց, և ՚ի խրատուց՝ յո՛չ այլ
 ինչ իր զբաղին հանապազ՝ բայց
 միայն՝ ջանալ առ ՚ի հաճելի երևիլ
 յաչս տեառն իւրեանց. և զս՝ այս՝
 սիւթել երբեմն զչարիս ընդդէմ՝ սա-
 խանձաւոր սեղեխաց, և շտուլ զցան-
 կութի անձին՝ լլկելով բազմիցս՝
 զբնաւորութի սաստկապահանջ, և
 հրապուրիչ զգայարանաց, որք ՚ի մեջ
 այնպիսի միաբանուէ՝ ճակածան շինին
 առաւելապէս՝ քան Թէ յայլ ամ տե-
 ղիս :

Ի վերջ այսոցիկ բանից՝ պարտիսք
 զեկուցանել նաև թէ՛ եղբարք, որ
 դիք և աղգականք Ֆէթալի Շահին՝
 փութան յոյժ հեռանալ ՚ի թուլա-
 մորթ ուսակուէց, և ՚ի փափկասեր
 կեանաց, որ կործանիչն եղեն նախըն-
 թաց ցեղապետուէց Պարսից. այլ՝
 պարապին նոքա միշտ ՚ի գործառ-
 նուէիս կառավարուէ, և ՚ի խստին
 կրթուէիս ինչ մարմնոյ, տալով
 զանձինս իւրեանց մտ ջանիւք և
 ներգործութի՝ յայնպիսի վարժուէիս՝
 որ սեպհական են բարուց թափա-
 ռական ժողովրդոց, յորոց և շա-
 քաւիղեալ է ցեղ նոցա : Թագաւորն
 իսկ ևս՝ քան ի յոյժ ՚ի ձգել զսետ
 աղեղամք, և յառնել զծիրնսթաց
 արշաւանս, և զորսս. առ որ գնայ

դէժ անդամ մի յիւրաքանչիւր կօ-
թնեկի :

Մինչ սաստկանայ տապ ջերմութիւն
ամառնային եղանակի՝ օդ թաղաւու-
րանիստ քաղաքին Պարսից՝ լինի
վատառողջ և վտանգաւոր՝ վնայ-
տրիկ՝ և թագաւորն իսկ չնէ անտի
հանդերձ կանամբք, և սլաշատա-
կանօք իւրովք, և գնայ բանակիլ
ի շրջակայ վայրս Սիւլթանիա քա-
ղաքին՝ որ էր ի հստմն արքայա-
բնակ տեղի, յառաջ քան զլինելն
Սոլահանայ, և թէհրանայ՝ աթոռ-
թագաւորութե այնմիկ : Ի սոյն վայրի
և ևն՝ սոյն զբաղմամբք, և սոյն տա-
րադուք կելոյ՝ անցուցանէ թիւրն
զժամանակ իւր, ուն և առնէրն ի
սլաշատան. սլաշաւանդութիւնն վար-

կանէ ինքեան՝ երևիլ անոյ հասարակութե՝ յամենայնուամբն ՚ի վեցերորդէ՝ մինչ ՚ի յեօթնորդ ժամն առաւօտեան . անձիւ բազմութի մարդկան՝ յոր աստիճանի , կմ թէութե և իցեն՝ կարեն տեսանել զնա , և ներկայացուցանել նմա զխնդրագիրս . ուստի և զօրեմք մմ վստահութի վկայել զՔեթալի Հասէն զայն բան՝ որ լսի յուրբերութե Ծայիրայ , Թէ՛

Նկատէ նա անարգարար ,
 Ըզտակալի պայմանն չար ,
 Որ արդ զարքայս յօգնահամար ,
 Առնեն զանտես և զօբնահար :

Այսպիսի իմն ընտանութիք հպատակաց դէպ առ Թագաւորն՝ ընծե-

ունս սորա զդիւրութի առ 'ի ճանա-
 ջել զկացութի ժողովրդեան, և ծիշդ-
 տեղեկանալ հարստահարական գոր-
 ծոց՝ որովք տանջին սոքա : Նաև սոյն
 տեսակ համարձակութե՝ առ-իՅ իմն
 շինի արքային առ 'ի կարեկից հան-
 դիսանալ վշտակրուէց 'նց, առ 'ի
 գտանել զէզանակ փարատման ցաւոց
 'նց, և առ 'ի արգելել, և մանաւ-
 անդ և պատժել զզրկանս և զանի-
 րաւութիս : Յարեցուք աստ և զայս,
 Թէ՛ հանձարախօսութիք, և ծաղրա-
 բանութիք կատակախօսացն (لوطی ,
 Լուծի) Թագաւորին՝ ներգործեն 'ի
 վերայ վարուց 'նր յոյժ յոյժ, և
 աւելի քան զոր կարծեմք, 'սա զի՝
 այնպիսի խեղկատակ անձինք՝ որ առ-
 արտաքս՝ կարի աննշան ոմն երևին,

որք և անընտրողուք ինչ լքեալ
 եղևն ՚ի յարքունեացն Եւրոպիոյ՝
 հայթհայթեն բազմիցս Թագաւորին
 Պարսից՝ զինչ ինչ օգտակար տեղե-
 կուէիս . և պարզմտուք իւրեանց ըստ
 երեւելու թեանն՝ տան նմա զկարեւոր
 ազդարարուէիս :

Բայց ՚ի սոցանէ՝ գոն անդ առ
 Թագաւորն՝ նաև դերասանք՝ որ և
 կոչին առակախօսք حدان , Հատ-
 տաս , և Թուին լինել պիտանիք
 հանգոյն այլոցն . պաշտօն սոցա պա-
 հանջէ ունիլ զմեծ դիւրուէի ՚ի ճո-
 ռոմարանել , զքաջ յիշողուէի , և
 զբնմ պատկերակերպուէի մտաց :
 Անկարելի ի իմն է ծանուցանել աստ՝
 թէ քանի յօժարամտուք բերին
 Պարսիկք յայսպիսի զբօսանս , և

Թէ զորքան կատարելութիս մուծեալ
 իցեն սոքա յայս արուեստ առակա-
 բանելոյ : Այն զի՝ սոյնգունակ առ-
 ակախօսութիք առ նմ՝ ունին զտեղի՝
 գործողական քերթո՞ւածոց , և առ-
 ակախօսքն՝ զԹատրոնական դերա-
 սանաց . իսկ կրպակք սրճագործաց
 ոց՝ ՚ի կիր արկեալ լինին փոխան
 կրկիսաց :

Յորդորիմ են Թաղատել աստ Թէ՝
 սոյն այս արուեստ առակախօսութե
 սկզբնաւորեալ իցէ նախ՝ ՚ի մեջ
 Պարսից . և կարծեմ արդէն հաս-
 ատեալ զայս վարկումն ՚ի ձեռն
 վկայուէ երևելի և խոհական պատ-
 մաբանին Ալմաստուտայ , բերեալ ՚ի
 նախերգանս Թարգմանութե իմոյ ու-
 հագնացուեցն Սինտոլատայ Ծո-

վայսոյ (*). Նաև անու՛ւանք գլխաւոր
 միջնարկախօս դերասանացն մատենին
 անու՛ւանելոյ՝ Հազար և մի ցայգք,
 գորով յայտնապէս բառք պարսկա-
 կանք՝ յայտ յանդիման ցուցանեն
 թէ մատեանն այն՝ գրեալ իցէ զառ-
 աջինն՝ վաղեմի շեղու՛ւաւ Պարսից,
 և ապա՝ անձշղու՛ք իմն Թարգման-
 եալ, կմ մեկնաբանօրէն շրջեալ ՚ի
 յարաբացի բարբառ, և յարմարեալ
 նաև բարուց, և սովորուէց Թա-

(*) Տպագրեալ ՚ի Թագաւորական
 տպարանի, ՚ի 1814. ամին՝ հանդերձ
 արաբական բնագրաւ, ՚ի մի հատոր,
 և դրիւք վեշտասան ծալից. որ և
 գտանի առ գրգալաճառն՝ Պարոն
 Նըվեօ :

փառահան աղգին այնմիկ՝ որ խօսի
 դայն հոյակապ, և հարուստ լեզու :

Բարձեալ՝ ո՛չ կամիմք ՚ի մուս-
 ցօսս Թողուլ և ղ բացերեակ սէրն՝
 զոր ունէին նախնի Պարսիկք առ
 պատմութիս, որք ՚ի մէջ ամ աղգաց՝
 լծակցին փոքր ՚ի շատէ՛ ինչ ինչ առ-
 ասպելայլէս հիւսնւածոց : Յիշես-
 ցուք նաև զփոյթ նոց ՚ի պահպանել
 զվիպասանութի բնիկ երկրի իւրեանց՝
 մինչ ՚ի գալ անդ ճակալ մահմետա-
 կանաց : Յաւելցուք ասել ևս՝ Թէ
 ընտիր գրնւած նոց բանաստեղծական
 յօրինեալ եղև ՚ի մնացորդաց հաս-
 գոյն տարեգրութեց նոցա, որք ցրնւ-
 եալ, և պատառուտեալ եղևն ՚ի ղօ-
 րացն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ,
 ՚ի Հռովմայեցւոյ, և ՚ի Յունաց և

ևս՝ ՚ի ժամանակս Ստորական Կայ-
 սերուէ . ապա սակաւ առ սակաւ
 սպառ-սպռն ջնջեալ եղէս այսոքիկ
 նիւթք գրագիտական՝ ձեռամբ ան-
 տոկ և բանդագուշեալ մահմետա-
 կանացն՝ եօթներդ դարուն թն՛իս
 Քսի :

Ունիմք յառաջ բերել աստ և
 զայլ նոր իմս փորձ՝ որ ցուցանէ թէ
 առ Պարսիկն՝ գոյ համեմատուէ իմս ՚ի
 մէջ պատմաբանուէ , և առակաբա-
 նուէ . քան զի՝ այժմեան առակա-
 խօսք նոցա երևին փոխանակել զտեղի
 պատմա գրացն իսկ արքունեաց Հու-
 շանայ և Եկբատանայ , որք ար-
 ձանագրէին զդիպո՛ւածս իւրաքան-
 չիւր ամաց : Գուցէ՛ Տակիկի և
 Ֆէրտուսի բանաստեղծք Պարսից՝

ձգձգեցին անտի ղհատուկտիր բանս
 ինչ՝ առ ՚ի շարաբարդել ղՇահ Նա-
 մէհ, չօն ծն, մատեանն :

Արդ՝ որովհետև խօսեցաք աստ
 զոմանց բանագէտ արանց կարգերոց
 յարքունին Պարսից, ո՛չ կամիմք
 զանց առնել նաև ղյիշատակուի
 ինչ ՚ի վր բանաստեղծին, և նկար-
 ջին արքունւոյ : Նշանաւոր իմն է
 արդարև՝ տեսանել զգործառնուի
 նկարչուէ յատկապէս հաստատեալ
 ՚ի յարքենի դռնն մահմետակրօն
 տիրուէ ումեմն • որոյ պարտ իմն
 երևէր շինել՝ խստին արտաքսումն
 մտնկարակերտու թեանց մարդկեղէն
 կերպարանաց • բայց՝ դիտեմք արդէն
 զմեղկուի Ալիական աղանդաւորաց
 կոչեցելոց մասնաւոր անունամբ՝ Շա-

Հիտք կմ Շահատակք, شاهی, զորս
 և արդ խատակրօն Սիւննիթեանք,
 سنّی, կմ օրինապահ Օմարեանք՝
 ունին ի սակի ապահաւատ և դէս-
 ադրուժ արանց, ծանրաբեռնելով
 զնս՝ սակ՝ դարովական, և նշովալից
 բանիւք զարհուրելեօք : Այլ արդ՝
 եթէ դոյն նշովակոծ արտասանութիք
 գրգռեալ լինէին յարնէնտադիտու-
 թեանն իսկ այնոցիկ պատկերահա-
 նաց՝ հարկ լինէր յայնժամ վար-
 կանել զսոսա այնքան անբասիրս՝
 յաչս դէնասիրաց, որքան և ան-
 գովանսիս՝ յաչս քաջարնէնտ պատ-
 կերագործացն՝ հանդիսաման. սա զի՛
 ունելով զկայտառատեսիլ երփնա-
 ներկս՝ ո՛չ գիտեն նպաստաւորիլ նո-
 քօք, և ո՛չ ունին զլոյզն ինչ տե-

ղեկուէի նախագծի. որպէս և տեսաք
 արդէն և ս զկենդանագիրն Ֆէթալի
 Շահին, զտո՛ւեալն ՚ի նմանէ իսկ՝
 ՚ի պարգև պարոնին Դօպէրայ, ՚ի
 1806. Թո՛ւին Քսի. որ և շարա-
 դասեալ մնաց յընթացս բազում ամ-
 սոց, ՚ի դահլիճ մի Կացրդարանին
 ուրո՛ւակաց Փարիզոյ : Նոյն նկա-
 րագործք Պարսից զփորձ առնուէն
 երբեմն ՚ի յօրինակել զգու՛նակեալ
 գաղափարս Եւրոպացւոց, և ձոր-
 ձաւորել զնոսա ՚ի պարսկական կեր-
 պարան. և այսպիսի յօրինո՛ւածք
 վրձնածուէ նոցա՝ սակաւ ուրեմն
 խորդարէմ գտանին : Բայց՝ անկ
 է ասել ՚ի վերջոյ, Թէ՛ պատկերա-
 կերտուէին է, ՚ի սակի այնոցիկ ար-
 ո՛ւեատաղիտուէց՝ որ տակաւին ո՛չ

Թափանցեցին անդր քան զՎստօրոս ,
 և ո՛չ զօրենս հռչակելուս և զնոյն նե-
 ղուց՝ ընդ բազում ժամանակս և
 ևս :

Առատաբարոյութի մն հանդի-
 սանայ Թագաւորն Պարսից զէպ առ
 բանաստեղծ իւր , և զէպ առ ամե-
 նեսին՝ որք հագներգուէ պարապին .
 վն զի ինքն իսկ՝ նովին ոգւով
 անկղիտանալով՝ կարէր վարկադրել
 զնս հակընթացս ինքեան ՚ի նոյն աս-
 պարեղ . նազի՝ նոյն արքայն Պարսից
 ո՛չ միայն ախորժի լսել զուտանաւորս
 կամակար սրտիւ , այլ և ինքն իսկ յօ-
 րինէ զայնպիսի տողաւոր քերթողու-
 ին՝ որք յոյժ արճեւտաւոր համարին
 ՚ի հեռաւորեալ վայրս յարքունւոյն
 իւրոյ : Ախորժէ նա և ևս մաս-

նաւորայէս՝ զսիղեխական քերթնւ
 ածս, և շարադրէ զտաղերգութիւ
 ինչ հաճելիս՝ որ կոչին Ղաղէլ,
 Լյէ, և որոց գլխաւոր վարկն՝
 կայանայ ՚ի բացատրութիւն ինչ բառից,
 և ՚ի փոխաբերութիւն ոմանց ձևոց, և
 կմ յինչ ինչ ցտրս մտաց, և յակն
 արկութիւն ինչ դիմաց. որք աներևան
 լինին ըստ գրչաւ Թարգմանչի ու
 մեք, և մերկանան յամ զմայլական,
 և վայել ճազեղ զարտուցն. վնյ և
 ոչ կամիմք բերել աստ զլոյզն մի
 ցուցակ յայնց տաղից՝ զորս բերաք
 արդէն ՚ի մէջ երկրորդ հատորոց գոր
 ծոցն՝ անուն անելոց Աթենարան: Այլ
 բնւ է ասել աստ, թէ՛ ունիմք ՚ի
 Թագաւորական Քրատան Փարիզոյ՝
 զօրինակ մի գեղեցկագիր գաւաղան

երգութեցն արքային՝ Պարսից, պարու-
 նակեալ ՚ի մի գեղազարդ, և մեծաձև
 հասոր ու թաածալ դրիւք, զոր պարուն
 Եւաննսին՝ այժմեան առաջին թար-
 դման Քաղղիոյ ՚ի Կոստանդնուպո-
 լիս՝ ընկալաւ ՚ի պարգև ՚ի Թագաւ-
 որէն իսկ Պարսից, և նո՛ւիրեաց
 ապա այսմ գերապանս՝ Մատենա-
 դարանի, որ է առաջին, և մեծա-
 հռչակն Հանդիսարան գրագիտա-
 կան բոլոր Քաղղիոյ, և Եւրոպիոյ
 և ևս :

Այլ արդ՝ հարկ է ասել աստ
 նակ, թէ՛ տաղերգութիւն չէ յայլ ինչ
 պէտս վն Քեթալի Հասին, բայց
 եթէ՛ ՚ի պարասլուծն ինչ՝ ինքեան
 հաճոյական, և գովելի, որ և ո՛չ
 հեռացուցանէ զնա ՚ի զբաղմանց

տերուէ իւրոյ. և ևս՝ պարգևատ-
 ո՛ւնուիք ինչ՝ զոր առնէ այնց՝ որք
 հետամուտ են նմա ՚ի նոյնպիսի աշ-
 խատանս՝ չեն բնաւ ծանրաբեռն
 ինչ չի՞ դանձուց տերուէ : Այլ ՚ի
 չի՞ այսր իրի՝ կարեմք յիշատակել
 աստ զգործ ինչ կառավարչի ունեմս
 Քաշանայ նահանգին՝ զորմէ խօսի
 նաև պարոն Մօրեր ծանապարհոր-
 դն. կառավարն այն՝ չի՞ շտրհաւ-
 որելոյ զմուտ նորոգ տարւոյ ինչ՝
 ուռաքեաց առ արքունին՝ զքեր-
 Թո՛ւածս ինչ ոտանաւորաց ՚ի պարգև
 տարեմտի, որք և ընկալեալեղեն անդ
 քիմ ընունելուք, և ըստ երևելու-
 են՝ հաճեցուցին զսիրտ Թագաւորին
 աւելի քան զմեծամեծ, և զիսկական
 հարկատո՛ւնին այլոց կառավար-

չաց. որք՝ առանց կարծեաց վշտա-
 նայինս յայնժամ՝ յաղադս ո՛չ գոլոյ
 նոցա և ևս՝ ծնեալ նոյնպէս բա-
 նաստեղծ ՚ի մարց իւրեանց : Վեր-
 ջապէս՝ յաւելցուք ասել և զայս ,
 Թէ՛ այն ձե ընտանուէն՝ որով վարի
 Թագաւորն ըստ տաղաչափս՝ ո՛չ լինի
 բնաւ արգել իմն ՚ի պահել հաս-
 տատունս զիւրոյ արքայուէն ար-
 ժանապատուութի. վս զի՛ ո՛չ երեւի
 նա երբէք հասարակուէն՝ առանց
 մեծաշուք փառաց , և առանց հան-
 դիսի արանց՝ որք կան միշտ շուրջ
 զնովաւ , և որովք և ևս՝ տիրա-
 բար իմն , և հանգոյն մեծազօր բա-
 նակի միոյ՝ հրամայէ զխոնարհութի
 ՚ի հպատակս իւր , որք և սովորեալն
 են աւելի սարսիլ առաջի ան , քան

Թէ խորհուրդ 'ի մէջ առնուել . զի
առաւելիապէս ճանաչենս նոքա զիշ-
խեցողսլի նորին՝ քան զարժանա-
պատճենս մարդոյս :

Ապաքէն չէ՛ անկ զարմանալ եթէ
արքունին Պարսից այնպիսի ձևովք
պերճանայ , և զայնպիսի խոտին ա-
րարողուիս պահանջէ . զի մամինչ՝
մինչև հայեցողածք , բառք , և
չարժմուսք մարմնոյ և ևս՝ են-
Թարկեալ են անդ ի ծանր ծանր
կանոնօք : 'Ի կամել Թագաւորին
տեսանել տալ զինքն ժողովրդեան
իւրոյ՝ որդիք իւր , նախարարք իւր ,
պալատականք իւր , նաև աւելի
քան զերկու հազար սպասաւորք
տան իւրոյ (*)՝ զարդարեալք

(*) Կոչին սոքա պաշտկական

մեծագին զգետուք, և արկեալք ձեռն զձեռամբ ՚ի վր կրծոց իւրեանց՝ կան յտին ՚ի յատուկ յատուկ տեղիս՝ ըստ զանազանութե աստիճանաց սոցա : Ամենեքին սոքա՝ ունին զաչս իւրեանց յառուցեալ առ Թագաւորն, և խուն միակնարկութի նորա՝ համարի պատ-

լեղուէաւ Ղօլտօ շահի غلام شاهي
այսինքն՝ ծառայք կիմ գերիք Թագաւորին. Հարտին ստորագրէ մանրամասն, և ճիշդ տեղեկութի զգանազան տեսակս պաշտօնից սոցա, կոչելով զնոսա Քօլտօ շահ՝ ըստ ռամկական արտաբերութե. տէն զճանապարհորդութիս նր հարբ. Թղթահամար 198. 201. և 202. տիպ՝ ութնամսալ :

դամաստո՛ւնէի իմն զն ինքեանց :
 Հէյիս իւլ իսլամն միայն՝ կարէ
 բաղմիլ անտ ընտ Թագաւորն՝ ըստ
 որում դէնասպետ սոցա : Երբ ար-
 քայն ուղղէ զբառ ինչ՝ առ ոմն
 յեղեղոց ՚ի դիւանի՝ ձայն ինչ հնչի
 յայնժամ առ ՚ի սլաստսիսանել նմա .
 կարես տեսանել յայնժամ զչարժումն
 ինչ շրթանց առն այնակ . բայց՝
 զոչինչ շարժո՛ւած ՚ի մարմինս նորա :
 Եթէ ձայնատու անձն այն՝ դտա-
 նիցի ՚ի հեռակայ տեղի ինչ ՚ի Թա-
 Թագաւորէն, առնէ նախ՝ զքայլո
 ինչ . և սպասէ ապա նոր իմն հրա-
 մանի . և այսպիսի օրինակաւ՝ մօ-
 տաւորի սակաւ սակաւ առ արք-
 այն : ՚Ի խօսիլ Թագաւորինս ընտ
 այլո՝ հասարակօրէն զերրորդ անձն

'ի կիր արկէ, փոխանակ անձին իւ-
 իւրոյ՝ ըստ այսմ օրինակի, پادشاه
 که میفرماید که փառը շահ մի ֆէրմայէտ
 քիհ, կիմ پادشاه میبسندد که փառը
 շահ մի փէսէնտէտ քիհ . այսինքն
 է՝ Արքայն հրամայէ որ կիմ
 հաճի Արքայն որ : Իսկ
 յուզղէն նախարարաց զխօսս ինչ
 առ Թագաւորն՝ զայլ իմն մասնաւոր
 ոճ 'ի գործ ածեն ասելով՝ ارادت
 که جهانست , Իրատեթի ծիհանէտթ
 քիհ, այսինքն՝ ցանկուէի աշխարհի
 է՝ որ : Բայց յայտոցիկ ձեռոց՝
 գոն յարքունին Պարսից՝ և այլ սո-
 վորուէք 'ի խօսս, և 'ի ծէսս . նաև
 յատուկ ոճք՝ յարձանագրուէիս, և
 առ անձին եղանակք ասից՝ առ 'ի
 յայտ առնել զվերադաս, կամ զստո-

բաղաս սլատիւ աստիճանաց իւրա-
քանչ իւրոցն :

Տօսախմբուէք ինչ՝ որ սլատրաս-
տինս անդ Վս մատնաւոր իմն դի-
պոնւածոյ՝ կատարին միշտ նոյնպիսի
մեծաշուք, և արքայավայել փառօք-
լինի անդ նաև բաղմածախ հան-
դէս. և ՚ի գործ դնին նոյնօրինակ
կարգք, և կանոնք միանգամայն :
Ամենայն սաշտօնակալք՝ յոր դասու
և աստիճանի և իցեն՝ սարաւան-
դէալ են միշտ համաձեւիլ այնոցիկ
կանոնադրուէց և արարողուէց՝ ամ
ծշղուէ : Նա զի՝ այսպիսի խստուէք
՚ի ծէսս՝ համարին առ նոսա իբր
էական իմն՝ առ ՚ի ցուցանել զվսե-
մուէի, և զմեծափառուէի Թագաւ-
որուէ Պարսից : Վս այսորիկ՝ և

մեծամեծ պաշտօնատարք Թագաւորին (*) սիգանան նաև շարձակ իշխանութիւն, և ունին միշտ շուրջ զիւրեանքք՝ զբնիւ ստորին պաշտօնակալս ընթացակիցս ինքեանց, և սոքա կան հանապաղ պատրաստական ՚ի կատարել զհրամանս նոցա՝ մամ փուլթով :

Յըսդուներն զօտարազգի դեսպանսք ՚ի Պարսիկս՝ դիպուկ առիթ

(*) Ի Ժամանակէ սնտի՝ յորում Հարտին, և Գամֆրո ծանապարհորդք՝ ետուն մեզ զտեղեկուէս ՚ի զբն անտէանակոչուէց և արտօնուէց այսոցիկ պաշտօնակալաց՝ բնիւ փոփոխուէք եղեն ապա ՚ի նս, ոսյ և ասէ Մալգոլմ :

լինի առ ՚ի յարդարել զհանդէսս
 ըստ վերոյգրեալ կերպի . Թագաւորն
 ՚ի յայտ բերէ յայնժամ զամենայն
 շքեղութի, և զմեծագործութի արքուն-
 ւոյն իւրոյ : Արարողութիք, հաս և
 ծէսք՝ որ կատարին անդ՝ ևն հոյն՝
 որ լինին և ՚ի յայլ ժամանակս :
 ՚Ի դէպ յաջողեցաւ արդէն՝ այժ-
 մեան Թագաւորին Պարսից՝ առ յե-
 րեան ածել զհանդիսաւոր խնճոյս
 Թագաւորութե իւրոյ՝ առաջի դես-
 սանայն Քանաթարայ, Ուղպէկաց,
 Անգղիացւոց, Գաղղիացւոց, Ռու-
 սաց, և այլոց ազգաց :

Վասն ներկայանալոյ Թագաւորին՝
 օտարազգի դեսպանս ոք՝ գնայ հասի՝
 հանդերձ մամ գործակալօք դեսպան-
 ութե իւրոյ՝ մինչ ՚ի մին ՚ի ներքնա-

յին դրանց արքունի պալատան. ՚ի
 ժամանելն անտէ՛ և ՚ի հասնիս իսկ
 վայրկենի՛ սկսանիս նշմարել զլըռ-
 ութիւն իմն վիհայիս. Թո՛ւի նո-
 ցա Թէ՛ երիվարք և ևս՝ վարժեալ
 իցեն առ ՚ի պահել անտէ զխստութիւն
 ծիօնց. զի սոքա իսկ՝ հաղիւհալ
 վստահիս շարժել զգլուխս իւրեանց
 ՚ի հասնիս տեղւոջ : Յետ այսորիկ դես-
 պանն այն իջանէ, յերիվարէ իւրմէ,
 և ածեալ լիսի ապա ՚ի յօթեան
 ինչ՝ ուր սպասէիս համա մեծամեծ
 պաշտօնատարք տերունն. և զկնի
 հանգստանալոյ նորա անտէ՛ յընթա-
 ցս ոմանց բոպէից՝ ծանուցունն ինչ
 լիսի ամից՝ Թէ Թագաւորն բաղմեալ
 է ՚ի վր դահիս իւրոյ. և յայնժամ
 ամ արք հանդիսին՝ յառաջ ընթա-

նանս դէպ ՚ի դիւանաստանն արքայ-
 ական : Սոյն այս ասպարան՝ որ է շի-
 նո՛ւած իմն հոյակապ , և կանգնեալ
 ութն աստաշափ բարձրութի ՚ի վեր
 քան զյատակ իւր՝ գտանի զետե-
 ղեալ ՚ի մեջ փափկավայր դրախտի
 միոյ՝ յօրինելոյ ծառազարդ շաւղօք
 երկայնաձգելովք , և աղբերակամբք
 զն՛արծալեօք : Եւ ք բոլոր տարա-
 ծուի իւրաքանչիւրոցն՝ այնոցիկ
 անցից , ՚ի մտից անտի պարտիզին՝
 մինչ ՚ի դահլիճն՝ ուր է տախտն
 արքայական՝ դասաւորին յայնժամ
 կարգ առ կարգ , և ըստ առանձինն
 առանձինն արժանապատո՛ւնեց 'նց՝
 արքայազունք , և նախարարք , մի-
 անգամայն ազատանին , և պալա-
 տականք , և այլ զանազան խումբք

Թագաւորական պահանջացն : Բայց չնաշխարհիկ տեսարանն այն՝ յարդարեալ երաստիւ երևելի արանց՝ փարթասօրէն պճնազարդելոց, իսկ և իսկ աղօտանայ, մինչ տեսողութիք աչաց անդրաշքջին առ անձնն իսկ արքային, որոյ գահոյք, և զգետք միանգամայն՝ շողշողեն փայլակնացայտ մարգարտովք (*):

(*) Ամենայն պատուական անդամանալք հաւաքեալք ՚ի Պարսկաստան՝ գտանին այժմ պարփակեալք ՚ի գոհարանոց Թագաւորին այնմիկ ծի. որ և ըստ մեծի մասին՝ են սոքին մնացորդք դանձուցն Բեհլի քաղաքին Հալկաց. զոր և յորոց առեալ՝ երեր Նասիր շահն իսկ ՚ի Պարսս : Երկու աղամանալք տա-

Մինչդեռ քիստա՞յ դնայ դեւ-
պանն՝ երկու պաշտօնակալք կաշով
յաջ և յահեակնն, և ունեւրով ի
ձեռն զգաւաղանն ուօթագործեալ

բականոն մեծուք՝ տեսանին յերկու
սին արմիւնս զդեստուց Թագաւ-
որինն • մինն ի անցանէ՝ տաշեալ ի
վարդաձե՝ կոչի Նور دنياب, Նուրի
տիւնեա, այսինք՝ ըյս աշխարհի •
իսկ միւսն՝ որ է գոհար ինն բազ-
մանկիւնեայ, արտւանի՝ درباي نور
Տերեայի սուր, այսինքն է՝ ոչկիա-
նոս լուսաւորուէ : Ըտ. այտտիկ՝
տեսանի նաև մօրուսք ինն՝ շարժա-
ռիթ զարմացման, և յարգուէ ժո-
ղովորեանն՝ պատճառաւ Թաւուէ,
և անշափ երկայնուէ իւրոյ, որ
երևի անտ՝ և ևս յաւերուլ զվե-
հափառուի արքայականն գահին :

ոսկւով՝ ՚ի նշան ինքեանց բարձրա-
 գոյն արժանապատուութե՝ տան նմա
 առնել երկիցս՝ զողջունապատուութիս
 ինչ (*): Եւ ապա ՚ի ժամանել նո-
 րա ՚ի պատուանդան գահին՝ ներա-
 ծուն դեսպանաց հռչակէ, յայնժամ
 զանուն նորա, և զանուն Թագաւ-
 որին՝ զորոյ անձն ներկայացուցանէ
 անդ: Արքայն Պարսից պատասխա-

(*) Պաշտօնակալք Պարսից առ-
 նեն երկիցս զյարգութիս մեծամեծս՝
 ՚ի յերկու նշանեալ տեղիս, յառաջ
 քան զմտանելն ՚ի դահլիճն՝ ուր
 կայ բազմեալ արքայն. « Բարձի ես,
 » ասէ, Մալգոլմն, զխոյր իմ ՚ի
 » գլխոյ՝ յերկաքանչիւր տեղիսն
 » յայնտո՞րիկ, և արարի զողջունա-
 » տուութիս ինչ խոնարհական՝ ՚ի
 » մտանել իմ ՚ի դահլիճ դիւանսին: »

նէ, յայնժամ այսպէս, **دوش آید** خوش آید,
 խօշ ամէտէ հիտ, այսինքն՝ Բարեաւ
 եկեր դու. և ասպա հանդէցուցա-
 նեն զդեսպանն այն ի մէջ նոյն դար-
 պատի, այլ՝ փոքր ինչ հեռի ի դա-
 հոյիցն: Յետ մատուցանելոյ արա-
 թողութիւնս՝ զվկայական հրովարտակն
 իւրոյ դեսպանունէ՝ Թագաւորն կրկնէ
 նմա քաղցրութիւնսն՝ Բարեաւ
 եկեր՝ ասելոյ. և ասլան սկսանի առնել
 թիւսն զխօսակցութիւնսն ինչ յարմար
 ի հաճեցուցանել զնա, և մանաւ-
 անդ՝ առ ի հանդուցանել զնա ի
 հանդիսական ձանձրութենէ՝ յորմէ
 շրջապատեալն եղև նա յանապատ-
 րաստից (*):

(*) Մանրամասն տեղեկութիւնք

Եթէ, սո՛ւ իրէ, անո՞ղ դեսպանն զի՛նչ

գրեցի արդէն զարարողութիւնն՝ որք
 եղևն ՚ի 1800. Թո՛ւ ինն՝ յառնել իմ
 զառաջին տեսչութի ՚ք արքունւոյն
 Պարսից. Թագաւորն ինձ զալով իմն
 ասաց ինձ յայնժամ այսպէս՝ « Յայլ
 » ում՝ անձագի՛ խօսեցողք զկարևոր
 » իրաց. բայց՝ այսօր կամիմ զՕրա
 » պետ Մարգարէ՛ն զի հաճեցուցես
 » զհետաքրքրութի իմ ՚ի վ՛ր իրի ինչ
 » զոր լո՛ւայ, և զոր ո՛չ կարեմ հա
 » լատալ. ճշմարիտ իմն է արդե՛օք՝
 » Թէ, Թագաւորն Ասգղիոյ զմի մի
 » այն կինն սենիցի » : Պատասխա
 » նեցի նմա ստորասելով զիրն, և
 կրկնելով Թէ՛ ոչ ոք ՚ի քրիստոնեայ
 Թագաւորաց կարէ, ունիլ աւելի քան
 զմի ամուսինն. և հարց զարձեալ՝ ար
 քայն Պարսից ասելով՝ « Ունի՛
 » ուրեմն զսիրուհիս ինքեան : Առ

ինչ ընծայո՞ւ ընկալաւ զնոսա միշտ
Թագաւորն՝ գաղթուէ իմն, և ա-
ռանց ցուցանելոյ զնշան ինչ շտր-
հակալուէ, կն՝ զարմացման իւրոյ,
Թէ և մեծագին իցեն իրքն այտօքիկ

» որ սլատառխանեցի վերստին Թէ՛
» Թագաւորն Ասդղիոյ յարեալ գո-
» լով յոյժ առ մաքրուէ վարուց,
» և առ առաքիտուէ՝ ո՞չ ընենի
» զայնսպիսիս » : Արար նա ապա
զմեծամեծ գոյուէս իսկ զԹագաւորէն
Ասդղիոյ, վերոգելով և ևս՝ Թէ
նա ինքն իսկ՝ ո՞չ կարէ լինել Թա-
գաւոր այնպիսւոյ ճի երիք՝ ուր
յաճախեն նոյնգունակ սովորուէք :
Այս ամ զրուցաբանուէ՛ դիւրացոյց
զանձն իմ, և զերծոյց զիս յոմանց
նախընկալական ծիսից սովորեցելոց .
Մալգոլմ :

յոյժ յոյժ : Ձի 'ի մէջ հրապարակ
 ատենսի՝ արգելէ՛ նա ինքնին իսկ՝
 զչո-իչն զարմագանուէ դրո՞ւնեալ
 յանձն իւր՝ 'ի տեսութենէ, ճարտա-
 րագործ հանձնիցն կարի ցանցառա-
 գիւտ եղելոց նսիս : Գերամբար-
 ձուք աստիճանսի իւրոյ պահանջէ՛,
 զի ոչ ինչ իր՝ Թո՞ւնեցի ընդունակ
 առ 'ի կարել նահանջեցուցանել
 զանասարքերուք մեծանձնուէ իւրոյ .
 ուստի և պարտաւորի գաղելառաջի
 հասարակուէ զդուն ինչ նշան շարժ-
 ման յանձն իւր, և սպասել ապա
 մինչ 'ի ժամ ինչ պատշաճաւոր՝
 յորում ո՞չ և ս երկնչի 'ի վտանգ
 դնել զպատիւ վեհափառուէ իւրոյ :
 Բայց սակայն՝ Ֆեթալի Շահն ո՞չ
 կելծէր ինչաւ զչո՞ւարձուքն՝ զոր

տայր ինքեան կառն՝ ընծայեալն ՚ի
 Մալգոլմ ասպետէ : այլ այսու ա-
 մենայնիւ՝ կարծեմ : Թէ ոչ ՚ի գործ
 ածէ : նա ղկառն այն յաճախաբար :
 Չի Թագաւորք Պարսից՝ ոչ ծա-
 նաշենք բնաւ զանունաւոր կառն, ինչ
 ձեռով և իցենք : և սովորեալ է Ֆէ-
 Թալի Հասն միշտ աշտանակել ՚ի
 ձիս : այլ ծանր հիւանդութի ինչ
 կարէ միայն արգելուին լինել նմա
 (*). և յայնժամ ևս՝ ՚ի պարաւան
 դիչն և լանել յարտաքս՝ բազմի նա

(*) Թագաւորն Պարսից ունի
 զերկու կմ զերիս փիղս : և յամն ինչ
 յառաջ՝ հեծնոյր ՚ի մին ՚ի նոցանէ :
 և առնէր զարշաւանս յաւուր տա-
 րեմտական տօնի : Մալգոլմ :

ի պատգարակ ինչ բարձեալ ՚ի վր
երկուց ջորեաց, և գնայ այնպէս՝
ուր և կամօցի (*):

Վրանք և տաղաւարք Թագաւո-
րին ևս կարի մեծագին և հոյակասոյն
կերտուածք յոյժ յոյժ, և շրջա-
պատեալք պատտառահիւս փակարա-

(*) Պատգարակս այս՝ կոչի ըստ
Պարսից՝ **تخت روان**, Թախթըրէվան, **روان**,
այսինքն՝ գահոյք գնայուն, կի՛ գա-
հաւորակ. անուանեմք առ մեզ նաև՝
դարդիծ, Ժանաւոր, և կամ պաղ-
պաջունք. և է սա հասարակօրէն
վանդակ իմն լայնածև, անուանեալ
سج, Բաճվէհ, և տարեալ լինի ՚ի
վր երկուց ուղտուց, և յորում ամ-
փոխին կանայք Թագաւորին՝ մինչ
գնան ը նմա ՚ի յագարակս:

'սօք՝ որք Թագուցանեն ՚ի հայեց-
 մանէ, հետաքննին արանց՝ զներքին
 և զարտաքին սենեակսն միանգա-
 մայն : Մի և ՚այն ծէսք, և կա-
 ՚տնասպահուիք՝ որ լինէինն ՚ի Թ,հ,հ-
 քան՝ լինին ՚սակ յայսպիսի չուս
 Թագաւորական : Այլ՝ պարտիմք
 են Թաղբէլ աստ՝ Թէ՛ ՚ի յագարակետդ
 օթւանսն՝ սակաւամասն լինելոց են
 հարկիւ հանդերձանք կսաստանի
 Թագաւորին : Սաստիկ հրամանն ինչ
 Նատիր Հահին՝ արգելեաց երբեմն
 զօրագլխաց Պարսից՝ շուշ զբանակ
 իւր բազմութիւնսն Ենթացակից կանանց
 (*). և ետ յայնժամ ինքն իսկ ուղ-

(*) Չեռագիր մատեանն ինչ՝ զոր
 ունիմ արդ առ իս՝ ասէ Թէ՛ Նատիր

մին իւրոյ՝ զօրինակ իմս՝ զոր բաղ-
 ումք գովարանեցին, այլ ո՛չ կամեցան
 նամանիլ նամ :

Թէպէտև Պարսիկք ախորժանօք
 բերին առ զինո՛ւորական վարժուիս,
 Թէպէտև որոտ ընդ ոստն յաղթա-
 նակուլք՝ երևեցուցին զքաջասրտուի
 ինչ ՚ի յարշաւանսն այնմիկ Յակալի,
 և ՚ի վերջին սլատերաղմուսն իւ-
 րեանց՝ որ ընդդէմ Տուսաց. այլ
 զի հարկ է վկայել և ևս՝ Թէ արդ-
 եան Պարսիկք դեռ պահեն, և

Հահն հրամայեաց զօրասկտաց իւ-
 րոց՝ ո՛չ տանել ընդ ինքեանս աւելի
 քան զսի կին ՚ի բանակն. իսկ ինքն
 բաւականատայր ունելով զերկուս և
 եթ. Մալգուլմ :

պահեցոց են տակաւին ը երկար
 ժամանակ՝ զԹուլամորթութիւն, զղեղ-
 խութիւն, և զնափառութիւն այնոցիկ
 Պարսից՝ որոց պարտութիւն՝ հռչա-
 կաւոր արար զանձնանս դաշտացս
 Մարտիրոսեան, և Պղատեան, և
 միանգամայն՝ զծովեղրեայ տեղեացս
 Սաղամիսեան :

Բայց արդ՝ կարևոր թերևս ի-
 ռաւամբ ինչ կշտամբել զանտալ սոյ
 հեղիկազղեցուեն իւրեանց օրարաժ-
 սի, և կամ զվայելել սոյ զամբ բեր-
 կրութիւն արգաւանդահող, և գեղեց-
 կադիր Յիս՝ ուր բնութիւն իսկ զեռ-
 եղեցոյց զնս :

Անկարելի իմն է տալ աստ գէթ
 զսոսկ ինչ ծանօթութի՛ն վերայ ան-
 համար պտղաբերութեց գաւառացս :

Պարսից • ամենաշաւ ընդեղէնք ,
 ընտիր ընտիր միրգք , նա և օգտա-
 կար արմտիք Եւրոպիոյ՝ բարգաւ-
 ածին անդ ընդ բերս Ասիոյ : Ազգի
 ազգի տեսակք խաղողոց միայն՝ բաղ-
 կացուցանեն ղերկար իմս դասակար-
 գուի անո՛ւանցն նոցա • այլ՝ չափաւ-
 որեւէ կամելով ղքարձակուի բանից
 մերոց՝ յայտ արասցուք սուղ մի ,
 Թէ խաղողք՝ յորոց պատրաստի
 քաղցրահամ գինին Շիրազայ՝ ա-
 նո՛ւանի առ նս մասնաւորապէս ۞
 Աշի • և Քամֆէր ճանապարհորդն
 նամանեցուցանէ զայն՝ գինւոյն Հեր-
 միթաժայ լերին Գաղղիոյ : Ի շրջա-
 կայ վայրս քաղաքին Շիրազայ՝ բու-
 սանին դիմակ դիմակ վարդք , և
 յորոց Թորթորեալ հայԹայԹի իւղն

Վարդենի բնակ առատուք, և առեղի
 քան յայլ մամ տեղեաց, և ՚ի Հրտկաց
 Ծէն և ևս : Այլ այս հիւժ աճու
 շահոտ՝ փափագելի է յոյժ յիբր եր-
 կու ղարուց հետե՝ մամ բնակչաց Ա-
 սիոյ և Եւրոպիոյ միանգամայն . ղի՛
 հասար Թորերոյ ղվարդերս, ك عطر ,
 Աղբի կիւլ, գտեալ եղև ՚ի 1612 .
 Թո՛ւին Քսի, ուն և արդէն ցուցի
 ՚ի մասնաւոր ծառ ինչ տո՛ւեալ համ-
 առօտիւ :

Չբաղում տեղեկուլիս կարի օգ-
 տակարս՝ զօրէ մատուցանել մեղ ա-
 րո՛ւեստն ձկնորսուէ մարգարտածին
 սատափից՝ որ գտանին ՚ի սլարսկա-
 կան Ծոցն . Թէ, և իաղ իաղք, կի՛մ
 աւաղուտ ժայռք Հրմուղայ սպառ-
 եալ իցեն այժմ, և կամ տարափո-

խեալք դէպ ՚ի տեղիս Պէստէրուիքայ :
 Չայլ իմն տեսակ սփտանուէ ընձեռէ,
 մեղ սաւե՝ կերպն սնուցանելոյ, և
 շարժելոյ զձիս՝ ընակչացն Տարսիս-
 տանայ, և Արարտամայ . քանզի
 Պարսիկք՝ այնպիսի իմն փոյժեռ-
 անդն ըլձիւ պարապին միշտ յար-
 ո՛ւկստ հեծելուէ, մինչ զի՝ ՚ի հսուճն
 անո՛ւամբ երիվարի ٱسب , Ասոյ, (այ-
 սինքն՝ ձի, կմ երիվար) տային բա-
 ղումք զվերջաւորուէ ինչ՝ ինքեանցն
 սեպհական անո՛ւանց (*) : Այլ

(*) Նոյն սովորուէ էր և առ
 Հայո, ույ և տեսանեմք ՚ի պատ-
 մուէ՝ զանո՛ւանս բնմ արանց երեւե-
 լեաց, և քաջաց, զնորօրինակ Հա-
 մաղասոյ, Չամասոյ, Վշնասոյ ևն :

արդ՝ հարկ է պահել զառաջակայ
փոքր տեղին զոր ունիմք, առ ՚ի
կարել զծագրել նաև զհանդամանս,
և զյատկուէիս բնակչաց բարեդիր
աշխարհին Պարսից :

՚ի նոյն Ասոյ ձայնէ՝ յԹՊփան և
բառքս Ասպայ, Սպայ, Սպահի,
Սպասարար, Սպարապետ, նաև Աս-
պետ. որ էր անուն մեծի պատմոյ
առ Հայս : Եւրոպիա՝ զառաջինն
Հռովմայեցիք ըստ նամուռէ մեր՝
ետուն զնոյն անուն աղնունէ իւ-
րեանց նշանաւոր արանց. ապա միւս
ազգք Եւրոպիոյ ՚ի նոցանէ առեալ՝
ի գործ ածեն զնոյն սովորուէ միւսչե-
ցայսօր, տալով այնպիսի արանց
զմականունն՝ Գալաթիքէ, կմ Շը-
վալիէ, այսինքն՝ Չիաւոր, կամ Չի-
ապետ :

Թէ ըստ բնական ճրից մարմնոյ,
 և Թէ ըստ բնաւորուեցողոյ՝ ո՛չ
 դատարար իմք դասել զնս յառաջին
 կարգ ՚ի մէջ աշգացն Ասիացւոց.
 զի են դոքա ՚ի գեղեցկատէմ զարմե
 մարդկան, գործուսեայ և զօրեղ,
 ուսեւել զերեւակայութն՝ սթափ և
 վառ ՚ի վառ, զըմբուսումն մտաց՝
 արագ, և զշարժմուսան՝ վայել չա
 կերպ և հաճոյական: Առիթ եղև
 մեզ արդէն գովել զարիութն՝ զոր
 ցուցին մարտնչելով ըստ զօրասպետութ
 րմանց առաջնորդաց՝ որ արժանիքն
 էին հրամայել արեաց: Պարսիկք
 ուժդին սերով հակին առ կրթութիս
 զինո՞ւորական, և ո՛չ մասնակցին
 ապուշ, և կամակոր ըսողիմուսն
 ոմանց զրակցաց՝ դէպ առ օգտաբեր

նորածեղիս : Յայտնի է արդէն՝
 թէ նրպիսի ջանիւք արքայազուն
 իշխանն Աբաս Միրզայ՝ վարժի ՚ի
 Դաւրէժ յարնէստ զիննորական
 կրթութի, և թէ նրպիսի հասաւոր
 ունի, և փութով օժանդակեն նմա
 զիննորք իւր, թէ ՚ի գործ դնելով
 զնորանոր կանոնս գաղաշարժութի, և
 թէ յանձն առնելով յագանիլ զայլ
 իմն ձև զգետառնց՝ որ է աւելի յա-
 ջողակ, և աւելի յարմար յայնպիսի
 վարժութիս՝ քան զազգայինն հան-
 դերձ, զոր ժառանգեալ ունին ՚ի
 նախնական իւրեանց. և այս երևի
 ՚ի խորելուրդսն ձեռն ինչ եղելոց ՚ի
 հասգոյս շէնս Պարսապօլիս քաղաքի,
 որ կոչի այժմ՝ چاب قاپو, Զե-
 հել մինար, Բառասնասիւն, կի՛

ܦܪܫܐ , ܦܪܫܐ , Նախշի Ռոսդամ , և
 յայլոց ինչ շինու՛ածոց մնացելոց ՚ի
 ժամանակէ՛ որ էանց յառաջ քան
 զծագել Մահմետականու՛մն :

Բայց ՚ի ձեռոց զգետառուց , և գլխար-
 կի Պարսից՝ տեսանին նաև այլ
 հետք մնացեալք ՚ի հրապաշտ նախ-
 նեանց իւրեանց . Թէպէտև դարձան
 առ կրօնն մարգարէին իւրեանց ,
 բայց՝ պահեն դեռ ևս զկրկնածև
 տօմար , մին՝ ըստ ընթացից արեգա-
 կան՝ հանգոյն Կէսրաց , և միւսն՝
 շուսնական՝ համաձայն Մահմե-
 տականաց . և տօնեն անխախտ զտա-
 րեմուտ իւրեանց՝ ܐܘܪܘܟܐ , Նաւրուզ ,
 յառաջին աւուր գարնանամտի :
 Դեռ պահեն նաև Պարսիկք զհին
 նշան իւրեանց , ܐܘܪܘܟܐ , Նիշան , զոր

կարեմք կուշել կսիք, կմ դրօշակ տե-
 բուէ Պարսից, որ ներկայացուցանէ
 զարեգակն ծառագայթեալ ի յետուստ
 առ իւծոյ միոյ. դրո՛ւակս այն որ ցու-
 ցանէ յայտնապէս զմնացո՛ւած ինչ
 արեւադաշտուէ, և հրապաշտուէ
 վաղեմի Պարսից՝ հաստատեցաւ ՚ի
 վերջոյ՝ լինել ցուցակ կամ զարդ կար-
 գացն արեգական և առ իւծոյ, կու-
 չեցելոյ՝ نيشان مهر و شير, Նիշան
 միհրուշիր, որք և օրինադրեալ ե-
 ղնս ՚ի Քեթալի Հասէն, ըստ նախ-
 րուէ կարգին մահկի՝ զորոյ սկիզբն
 արար երրորդ Ալիմն. և յայնմ
 հետէ՝ մամ Աիւլթանք Օսմանեացն
 պարգևեն զայն զարդ դեսպանաց,
 և կմ ևս երևելի ծանապարհորդաց՝
 յ՛ճն իւրեանց. բայց՝ ինքեանք իսկ՝

ո՛չ տանեն զայն, և ո՛չ տան նաև
 իւրեանց մահմետական հպատակաց՝
 և այն՝ ըստ սկզբանց ինչ իւրեանց
 կրօնի, և կառավարուէ, յորոց վիճայ
 անօգուտ լինի ասել զինն աստ : Ո՛չ
 վստահիմք նաև առնել զգովուի ինչ
 աստանօր, ի վր չափազանց Թոյլ-
 տուճուճն Պարսից՝ վասն կիրառուէ
 զինւոյ, կմ ի վր հակման (զոր ո՛չ
 կարեմք կոչել արոճեւտագիտուի)
 նց՝ առ նկարչուի, և կմ ի վր կար-
 ծեաց նոցա՝ առ երևակայել զԱլին
 իրր անձական ոք, կամ վերջապէս՝ ի
 վր այն տեսակ հանգստականութեան
 ոգւոյ՝ որ լինի առ նս անշնչական
 իմն ցնորմամբ, և կմ ևս ի վր ինք-
 նուրաստ և ներանձնական վարուց
 նոցին միայնակեաց արանց :

Վս այն յիշատակեցաք աստ զայ-
 ստիկ հանգամանս, զի փորձիւ ինն
 հաստատենս, ոսյ և Թռի ինձ՝ Թէ
 ՚ի ծոց իսկ Մահմետականուէ և ևս՝
 Պարսիկք դեռ ո՛չ կորուսին բոլոր-
 վին զյիշատակ կրօնին Չրադաշտայ,
 և նախնի առնչուէց իւրեանց ընդ
 հնդիկս՝ որք դիտեն միաբանել զա-
 պականուէի վարուց՝ ընդ չափազանցն
 ջերմեւանդուէ, ըստ օրինակի Պար-
 սից : Յետին ազգս այս՝ պարս-
 աւեալ լինի նաև, վս իւրոյ ստա-
 խօսուէ, անհաւատարմուէ, և իար-
 դաւանական յարդանայ : Արդարև՝
 ՚ի խօսիլ նոյն քեզ՝ երևի Թէ՝ ո՛չ
 կամին սեպհականել ինքեանց զիբ
 մի. Թռի քեզ Թէ տուն նոյն՝ է իբր
 յարկ քոյ, և Թէ նոյնպէս քոյ ևս ամ

ինչք, որոց ցանկաս ծանաշել զտէրն :
Այլ զգնոյ շեր յոյժ, և մի դնէր
 երբէք ՚ի փորձ զառատաձեռնութի նոյն .
 նա զի՛ չեն նք բնաւ առատաբարոյ
 յայլ ինչ իրս, բայց եթէ ՚ի գովա-
 սանական քանս և եթ : « **Արիս** -
 » տոտել (ասեն նք) շինէր ան-
 » երկբայաբար իմաստնագոյնն մամ
 » մարդկանց, եթէ դու նչ շինէր
 » յօի : **Եթէ** նչ էր **Աստուծոյ** ստեղ-
 » ծեալ զարեգակն՝ ակունք քոյ իսկ
 » կարէին ըսել զպակասութի այսր
 » աստեղ : » իսկ ՚ի ձևս քաղա-
 քավարական շարժմանց՝ **Պարսիկք**
 ջանան երեւիլ ճոխացեալ նոյնպէս,
 և նչ ցանկալ ունիլ, նչ զԳաղղի-
 ացւոցն, և նչ զՔինացւոցն և ևս :
 ՚ի ժամանել պարոն կարտան սպա-

բապետին ՚ի Թէհրան քոյք՝ Թագա-
 ւորն Պարսից առաքեաց առ նա
 զմտերիմն իւր առ ՚ի խնդրել ՚ի նա-
 նէ, զներուծն հանդարտօրէն՝ պատ-
 ծառաւ անծրեւելոյն ՚ի նաին աւուր՝
 յորում իսկ մտեալն էր նա անդ :
 Բայց՝ յանցանք և մոլուխք ևս՝ ու-
 թովք նախատին Պարսիկք բոլմ իր-
 աւանք՝ պարտին վերաբերիլ առ ձե-
 քաղաքական կառավարուէն՝ որ
 նսլածեաց զնս ք տեղուէն յամայր
 դարուց յաջորդելոց ՚ի սկզբանէ, ան-
 տի, և մանաւանդ և ևս՝ առ կա-
 տաղուէն, և առ անառակուէն՝
 որք անանջատք են ՚ի քաղաքական
 վրդովմանց :

Յաւելցուք ասել նաև՝ Թէ ոչ
 գտանին՝ բնաւ առ Պարսիկս՝ սահ-

մանատրուէք ինչ ազատականք՝ ըստ
 նմանուէ մերոցն, և ո՛չ կարգադը-
 րուէք ինչ դպրոցաց ՚ի կրթուէ առ-
 հասարակ ժողովրդեան՝ հանգոյն մե-
 րայնոցն, որ ղբարերջանիկ ազդե-
 ցուիս ներգործեն առ մարդիկ Եւ-
 րոպական ճաց, յաղթելով իսկ նաև
 ընդդիմութեան ոմանց արանց, և
 ոմանց ընկերուէց՝ որք են էակա-
 նասիւս դադարականք և յետադարձք
 ՚ի հանդիսացեալ լուսոց :

Այլ՝ չէ՛ պարտ մտնանալ Թէ
 Պարսիկք ճնշեալ և տիրապետեալ՝
 կառավարին յանուն Այ, և մար-
 գարէին իւրեանց, և Թէ վերջո՞յ՝
 զրկեալ գտանին ՚ի կիրառութենէ
 տպագրական գործառնութեանց :
 Արուեստս այս՝ որոյ կարողուին է

անյաղժեշի յոյժ, և զիւցաղսական, ներգործեաց արդէն ևս քան զևս սու բարեբախտութի միծակիրն Եւրոպիոյ, և փոխելոց է հարկանորապէս զքաղաքական կարգադրութիւնս մտ ազգաց արևելից, որք և աստ ընդունելոցն են, և երկասիրելոց՝ զայն պանծալի արսէկստ :

Ահա՛ի մէջ այնպիսի տրտմալի կացութեց անսանի ազգն Պարսից, որ յարատեւ ունիլ զհակումն ինչ առ գրականութի, որ կարէ՛ նաև համընթաց շինել Իտալացւոց, և Գաղղիացւոց՝ ՚ի Թափանցկութի մտաց, ՚ի ճարտար պատասխանատունութիս ինչ արագութի, ՚ի մարդավարական ձևս ինչ, և մանաւանդ ևս ՚ի զուարծութի, և ՚ի տարականութի ինչ՝ ՚ի վր ամանց

կարծեաց : Երկու դիպու՛ածք պատմեալք 'ի Մալգոլմ' ասպետե՛ զօրենս աւելի իմն ճանաչել տալ աստ զՊարսիկս, քան թէ պարզ և ընտանուր հաստատութիք բանից :

Մասնաւոր ոմն վշտացեալ 'ի փոխանորդէ կառավարչի ուրեմն՝ գնաց ամբաստանել զնա առ նոյն կառավարիչն . և սորա ո՛չ կամելով անաւր բանից բողոքողին՝ եցոյց նմա զայլ գործակալս առ 'ի տանել զգանգատանս իւր . բայց ստեղծեալս այրն կամեցաւ յայնժամ պատասխանել նմա ասելով այսպէս : « Այլ դու » իսկ ունիս արդէն յամ տեղին, և » 'ի յարքուսինս ևս՝ զմտաւոր ազգականս » : Կառավարիչն՝ ձանձրացեալ անդ յոյժ 'ի բանից նորա՝

կրկնեաց զզրոյց իւր աղաղակե-
լով . Օ'ն 'ի բնց շէր , գ'սա-
լով 'ի դժոխս . իսկ միւսն՝ ա-
ռանց խռովելոյ յիսքն՝ բաւական՝
համարեաց տալ նմա զվերստին
ինն պատասխանի այսոքիւք բա-
'սիւք՝ « Արդարեւ որդի հօրեղբօր
» քոյ էր՝ այրն այն՝ որ մեռաւն
» յանցեալ շարաթի » . և այսու
կերպիւ ընկալաւ յայնժամ սոսկա-
կանս անձն այն՝ զիրաւունսն՝ զոր
իմպրիւր :

Եթէ չէր մեր արդէն ըստ բաւա-
կանին ծանօթաբանեալ՝ գուցէ պատ-
մուծիւնս այս ևս բաւական լինէր՝
'ի ցուցանել թէ Պարսիկք ո՛չ պա-
կասին 'ի զգաստութենէ , մտաց , և
յառատասրտութենէ ինչ : Այլ

Իմն պատմութի՛ զոր կամփոք յա-
 ռաջ բերել, ծանուցանելոց է մեզ
 'սակ՝ Թէ 'սախանձաւորութիւն կրօնի՛
 սակաւագոյն է առ Պարսիկս՝ քան
 Թէ յայլ անմահ մետաղէն աղգս : Եւ
 պարտ է և ևս՝ բացայայտակի ասել՝
 Թէ Թուրքի 'սոյ՝ ո՛չ պարսիակի միայն
 'ի կիրառութի գինւոյ, և յայլ օրի-
 'սաղանցութիւն իւրեանց կրօնական ա-
 բարողութեց. այլ և 'ի վստահութիւն
 ինչ՝ զոր յանձն առնուն մերժ ը
 մերժ ի դատել, և յերկմտիլ զկրօ-
 'նէն իւրեանց, և երեւիլ 'սակ ա-
 պահաւատ :

Մ'օղայ ոմն Պարսից քարոզելով
 'ի մզկիթի միում՝ ջանայր երբեմն
 յոյժ յոյժ՝ առ 'ի հաստատել վկայ-
 ուքք ինչ ասելով Թէ, ոգեհասն հրեշ-

տակքս որք անսնանեալք՝ Նէճիր և
 Մժածիր՝ առնեն զհարցաբանութիս
 ինչ՝ ըստ մեռեալս՝ ՚ի մտանել նց
 իսկոյս ՚ի գերեզմանս. մինս ՚ի յուս-
 կսդիր արանց՝ որ անդ էին՝ աղաղա-
 կեաց յայնժամ ասելով՝ « Մի հա-
 » լատայք բնաւ այդմ. զի յաւուրց
 » ինչ հետէ՝ մեռաւ ոմնս ՚ի ծառայից
 » իմոց. և յնժ քան զԹաղէնս իմ
 » զնս՝ լցի ևս զբերանս նորա բրնձովք.
 » և այսօր իսկ՝ գնացեալ հանսի զղի
 » նր ՚ի գերեզմանէս, և գտի զնմ
 » բրնձսն զեռ ևս ՚ի բերանս նորա
 » որպէս և եղեալ էի : Արդ՝ ճշմար-
 » տապէս մտածելով՝ պարտ է ասել
 » Թէ՛ անկարելի է հրեշտակաց և
 » ևս՝ տալ զպատասխանս ինչ՝ լի
 » ունելով զբերանս : »

Այսպիսի ձեռնարկուէի ինչ ար-
արեալ՝ ո՛չ թէ՛ ՚ի մշկիԹս՝ այլ և ՚ի
մասնաւոր ինչ տեղիս ՚ի մէջ Օսմա-
նեց՝ ո՛չ կարէր մնալ արդարեւ առանց
պատժոյ: Բայց՝ ո՛չ կամիմք նաև ցու-
ցանել աստ զբաղդատուէի ինչ՝ յա-
նիրաւս առ տաս. այլ՝ բաւ լիցի
մեզ յայտնաբանել թէ՛ որք ճշմար-
տաբար մարդասէրք՝ս են՝ ո՛չ կարեն՝
առանց կոկծանաց սրտի՝ տեսանել
մեկուսացեալ բոլորովին յամ ազգաց
Եւրոպիոյ՝ զազգ ոմն Ասիական՝ որ
կարէ զաւելի օգուտս ստանալ ին-
քեան՝ հարորդակցելով ըսդ մեզ :

Եթէ արքայազուն՝ս իշխանն Աբաս
Մերդայ՝ յարատեէ ՚ի փորձ, և ՚ի
վարժուէի իւր, և մասնաւանդ՝ եթէ
կամիցի նա մնալ հաստատունն ՚ի

դիտմունսն՝ զոր արդէն հրատարա-
 կեաց, և վերջապէս՝ եթէ ծախք
 ինչ՝ պատճառեալք վնայսոցիկ փոր-
 ձառուէց՝ խոհեմուք լիցին սնո-
 րինեալք՝ առանց շարժելոյ զտհա-
 ծուի ինչ՝ յոմանս դասս բնակչաց
 ժողովրդեան, և կամ յոմանս՝ սա-
 հանգս ծին՝ յայնժամ բաղում իրք՝ ի
 կարգադրուէց մերոց՝ կարեն ար-
 դարև օգտաւետուք ընկալեալ լինիլ
 ի Պարսից անտի. և սոքա՝ ընդ-
 ունակ են ջանացողուք իւրեանց՝
 հաւասարիլ մեզ ՚ի բնմ արձեւստս
 մերոյ ծի:

Թէպէտև սովորեալ են Պարսիկք
 աշտանակել յերիւար, և նախադա-
 սել զհեծելաղօր վարժուծիս. այլ՝
 Աբաս Միրզայն կամի բաղկացու-

ցանկել շուտով զգուշադ ինչ հետեւակ
 զօրաց, և որոց վարժիչքն՝ երևին
 լինել Սէրպազ անո՛ւանեալ գուշոն :
 'Ի լինելն այսր՝ Պարսիկք կարեն
 կաշտուլ զսահման, և զկարգ հան-
 գոյն զօրացն Եւրոպացւոց • սոքա
 միայն ընդունակք համարին առ 'ի
 պահպանել զԱսիա 'ի ծառայութենէ
 այնոցիկ զօրաց՝ որք սպառնան նախ •
 սոցա անկանի գուցէ պարծանքն
 պաշտպանելոյ զՏաճկաստան ընդդէմ
 հարո՛ւածոց արեւմտեայց, և բանալ
 զնորանոր շաւիղս 'ի պէտս վաճառա-
 կանուէց Ասիոյ : Յայնժամ զօրաւոր
 և անվաստակելի ուղտք 'սց'՝ որպէս
 նաւք անասպատի՝ յարմարին կաց-
 ուցանել զցամաքային գումարտակ
 ինչ՝ առ 'ի հակառակիլ յաջողուէ :

իմն՝ ընդդէմ ծովային նաւախմբից
 Եւրոպացւոց : Նաև՝ վաճառակա-
 նուէին Քիշմիրայ, վերին Հնդկաս-
 տանայ, և Թիպէթայ և ևս՝ զօրենս
 յայնժամ կախուլ զնոր իմն առաջ-
 նորդուէ՝ որ կարիցէ ծաղկեցուցա-
 նել զկացուէ աշխարհացն Պարսից,
 Ռուսաց, և Օսմանեանց և ևս՝
 մինչ ՚ի կատարեալն վիճակ բարե-
 բախդուէ : Այլ դոյնպիսի գոր-
 ծառնուէք՝ պահանջեն արդարև
 զբնի խոհեմուէ, և զբնի հաստա-
 սուէ ՚ի խորհուրդս :

Տեսաք արդէն թէ՛ զնորպիսի ու-
 շխմուէ, և զնորպիսի նրբամտուէ՝
 ունին Պարսիկք. և եթէ կորուսին
 մինչ ՚ի յիշատակուէին և ևս՝ զյաղ-
 թուէն նախնեաց իւրեանց ընդդէմ

Հրովմայեցւոց, Թո՛ւի Թէ՛ ժառանգեալ ունիս դեռ գո՛ւտ՝ զքաջասրտուի ինչ՝ որ զօրէ, յաղթել յաղթանակաց և ևս : Առաջսորդ ոմն ըստ արժանաւորուէ ինքեանց՝ կարէ փուծով արժանացուցանել զնս մականո՛ւնս իմիք՝ որ արդէս տո՛ւեալ եղև ուց՝ միայն վս բերկրամտուէ, և մարդավարական ինչ ձեւոց իւրեանց . այլ՝ յայսժամ ճշմարտուք իսկ՝ կարեն համարիլ ՚սոքա՝ Գաղղիացիք Ասիոց :



Յիշատակարան տեղեկութեան :



Ոմանք յաղգայտոց մերոց սիրելեաց
ծանուցին մեղ արդէն ղինչ ինչ բանս
գանգատմանաց եղելոց 'ի կողմանէ
ընթերցասիրաց աղգին՝ յաղագս խոր-
թնիմացն երևելոյ 'սց'՝ ոմանց բառ-ից ,
և ոճից եղելոց 'ի բազում մատեանս՝
յօրինեալ գրաբառ շարադրուք մերոյ
հոյակապ լեզունի : Սիրով և լրջմը-
տուք լուաք միշտ արդարև ղգան-
գատմանս 'սց' . ղի ցուցանեն այսոքիկ
բանիւք՝ Թէ սիրեն յոյժ յոյժ ղըն-
թերցանուք գրեանց , և Թէ փափա-
գին վերահասու լինել մտաց գրու-
եցն՝ ղոր ընթեռնուն . և այս ամ
փորձք՝ ղսորանոր գովութիս պատ-

չաճաւորեն ապաքէն գրասէր ազգին
մերոյ :

Բայց՝ պարտ է խոստովանիլ Թէ՛
ուսիմք և զայլ իմն պատճառ բա-
նաւոր, և հզօրագոյն քան զառա-
ջինն, որ պարտաւորէ զմեզ յոյժ
վարժիլ ՚ի գրաբառ եղանակս մերոյ
մայրական լեզուի : Նա զի մտ մ գ՛
որ կամիցի այր քաղաքավարեալ եր-
ևիլ յՅի, պարտի գիտել խօսիլ, և
գրել հայրենի լեզուաւ իւրով. և
եթէ այնպիսի ուսուցնասէր այր ոք
ցանկասցէ՝ սակ լինել աշակերտ գրոց,
և քաջ ծանաչել զսեպհականութիս
ազգին իւրոյ՝ պարտի և ևս վարժիլ
ի հարազատ, և ՚ի քաղաքավարեալ
ոճս այնր լեզուի : Օի ոմ ՚ի կերա-
կուրս, ՚ի հանդերձս, ՚ի բնակարանս,

և յընկերս՝ սիրեմք միշտ զկատարեալսն, և զպատուականսն, ըստ այնմ օրինակի՝ պարտիմք սիրել նաև զընտրելագոյնսն ձեոց խօսելուէ, առ ՚ի յնչ երևիլ գուհիկ, կմ անվարժ յաչս այլոց : Ըստ մամ ժամանակս, և ՚ի մէջ մամ ազգաց՝ արք լուսաւորեալք բարեպէս ծանեան զազնունէ լեզունագիտուէց, և զպարաւարուէքաջ գիտելոյ զսեպհական լեզունս առ ՚ի տալ զանձնէն՝ զփորձ ապառամիկ և հարազատ թէուէց. զի ոմ յմամ իրս՝ զմերայինսն նախ պարտիմք ծանաչել, և ապա զայլոցն, նոյնպէս և ՚ի գիտուէ լեզունաց՝ նախ պարտիմք գիտել քաջ զմերայն, և յետոյ զօտարացն :

Գարձեալ՝ լեզունս մեր գոլով բար

բառ սրբազան, հարուստ 'ի խօսս,
 ճոխ և պերճաբան 'ի ձևս ասացո՞ւ-
 ածոց, և միանգամայն՝ բռն և հարա-
 զատն մեր, և հնագոյնն յճի՞ զոր
 ժառանգեցաք 'ի նախնեանց մերոց
 'ի ժամանակէ անտի իսկ Նոյայ,
 և շարունակեցաք ունել անխափան
 յորդէոց յորդիս մինչև ցայսօր, պար-
 տիմք մաքրել զայն յօտարածին,
 և 'ի նորամուտ խառնող ածոց ինչ,
 և այսպէս անխառն աւանդել նաև
 մերոց յետնորդաց : Եւ ահա վն
 այսորիկ և ևս՝ պարտաւորիմք ա-
 մենեքինս՝ ըստանենալ փոքր 'ի
 շատէ՛ մերոց հարազատ, և գրա-
 բառ շեղո՞ւի : Չի կարեմք սովաւ և
 ևս՝ ածել 'ի միաձևութի զաղգ մեր
 'ի սփիւռս տարածեալ, յաւելուլ 'ի

րոս զկրկինս սէք առ իսկուշի, և առ
 հրուածինս իսկ իւրոյ սեպհականս Ծի.
 և միանգամայն սուհետ առնել, կմ
 զտել առ սակաւ սակաւ զԾիկ բար-
 բառսն՝ որ ՚ի Տաճկաստան, ՚ի փոքրս
 Հայս, ՚ի մեծս Հայաստան, ՚ի Մե-
 ջազէտս, ՚ի Պարսկաստան, և ՚ի
 Վրաստան, որք և զանազանինս ՚ի
 միմեանց՝ փոքր ինչ պարագայիւք,
 այլ ամենեքեան իսկ՝ հեռանան իւիք
 իւիք կերպիւ՝ ՚ի գրաբառ լեզուէ
 մերմէ:

Եթէ Գաղղիացիք իսկ ՚ի Փա-
 րեզ՝ ախորժենս վարժիլ յուսուճն
 Հայկազեան լեզուի մերոյ ըստ գրոց,
 ապա քանի՛ ևս իրաւամբք պարտին
 փուծալ յոյժ յոյժ ՚ի նոյն սէք ուս-
 ման՝ բուն Հայկազնեայքն՝ որ կան



'ի հայրենիս իւրեանց, և կամ յայլ
 Ծո ինչ՝ հեռաւորեալս 'ի հայաս-
 տանայ. զի փորձ ազգասիրուէ 'սց՝
 ևս աւելի տեսանի յայս գործ. վնց
 և յորդորեմ զ'սն ջանալ ո՛չ միայն վն
 օգտի ազգին առ հասարակ, այլ և վն
 ո՛չ երևելոյ յետամնաց յայնպիսի գով-
 ելի և յազնի՛ւ պարաւանդուէց՝ վար-
 ժելով զսեպհական անձն, և տարով
 վարժել 'տյնպէս զտղայս, և զաղջ-
 կուէս իւր. որպէս զի և սոքա 'ի
 լինելն՝ հարք և մարք՝ կարասցեն
 առնել ըստ այսմ կերպի, և տալ
 զօրինակ զաւակաց իւրեանց, և ամ
 ազգայնոց առ հասարակ :









